

Նոյն թուին Սինօգը որոշեց Ռափայել քահանայ Ռուբինեանցին ճանաչել մշտական քահանայ Երեանի ս. Յովհաննէս եկեղեցւոյ, որի մասին և հրամայեց տեղեկագրել Երեանի Կոնսիստորիային:

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԱՆԲՈՎԱՆԴԱԿԵԼԻ ԱՍՏՈՒԱԺԱՅԻՆ ՏԵՃԱՐԸ

(Բարութեան սերմերից).

Ջանազան երկրներում բարեպաշտ մարդկանց ձեռքով յանուն Արարչի և աշխարհի Տիրոջ կառուցուած են բազմաթիւ և բազմազան տաճարներ: Նրանցից մի քանիսը չլացնում են իրանց ահագին մեծութեամբ՝ նրանց մէջ կարող են տեղաւորուիլ տասն հազարաւոր աղօթաւորներ. միւսները յափշտակում են իրանց արտաքին բարեձեւութեանց նրբութեամբ և փայլով. ուղղաձիգ աշտարակները, ժապաւէնի նման բարակ զարդարանքները, թեթեւ գոյնը գոյն սիւնեակները երկար ժամանակ բեւեռում են իրանց վրայ անցորդների ուշադրութիւնը. երրորդները իրանց ներքին տեսքով աղօթողների վրայ շնչում են ջերմեռանդ խոհեր, զարթեցնում են նրանց մէջ կրօնական զգացմունք, տաճարի գէպի երկինք վերացող կամարները հեռացնում են աղօթողի միտքը երկրից և տանում մի ուրիշ, բարձր, երկնային աշխարհ: Շինողների ջանասիրութիւնը, նրանց բարեպաշտութիւնն ու ճարտարապետական տաղանդը նպաստել են կոշտ քարից ստեղծելու հարիւրաւոր ճշմարիտ հուշակաւոր շինութիւններ, որոնք արժանի են մարդկանց համար աղօթատներ լինելու: Բայց որչափ էլ բարելաւի, զարդանայ շինարարական գործը, որքան էլ նոր

ձևեր մտածեն ճարտարապետները՝ նրանց մտքին մինչև իսկ չի կարող դալ ստեղծել որ և է բան նման այն տաճարին, որպիսին ստեղծել է իրան համար Աստուած։ Այդ տաճարը Աստուծոյ անբովանդակելի աշխարհն է։ Այստեղ կաթուղիկէի փոխարէն թափանցիկ երկնակամարն է. բարձր սարերը ծառայում են որպէս սեղան. ծովերն ու ովկիանոսները՝ աւազան և սկիհ. անձրևոտ ամպերը սրսկիչ արեգակը, լուսինն ու աստղերը փոխարկում են կանթեղներին ու մոմերին. խնկահոտի փոխարէն երկիրը իւր չորս կողմերից խնկարկում է հոտաւետ ծաղիկների հոտով։ Այդ տաճարում ամեն ապրող պէտք է փառաբանէ Աստուծուն, արարածների ամբողջ կեանքը պէտք է լինի հանուր աստուածպաւեսութիւն. ամեն ինչ, որ ստեղծուած է Աստուծոյ ձեռքով, պէտք է ծառայէ Աստուծուն, կատարէ նրա կամքը, ապրի այն օրէնքով, որպիսին տուել է Աստուած։ Աստուած իւր զանազան արարածներին տուել է զանազան օրէնքներ. արեգակին իւր շարժման համար՝ իւր յատուկ օրէնքներ, խոտին և որդին—իւր, բայց բոլորի համար կայ մի ընդհանուր պատուէր, բարձրագոյն կանոն. իւրաքանչիւր արարած պէտք է ապրի անփոփոխ նրան ցոյց տրուած օրէնքներով։ Այդ օրէնքների խանգարումն է տիեզերքի աստուածապաշտութեան ընդհանուր հանդիսաւորութեան խախտումն, կոշտ անկարգութիւն անբովանդակելի Աստուածային տաճարում։

Ամենքը հասկանում են, որ տաճարում ժամասացութեան ժամանակ անհրաժեշտ է ջերմեռանդն կարգապահութիւն, որ սուրբ տեղի համար անասելի վիրաւորանք է, եթէ մէկը յանկարծ ի զուր տեղը սկսի տաճարի լուսամուտների ապակիները ջարդել, մոմերն ու կանթեղներն հանգցնել, պատերից սրբոց պատկերները պոկել, երգիչների և ընթերցողների բերանները փակել։ Ամեն ոք պարտաւոր է հասկանալ, որ նոյնպիսի, եթէ ոչ աւելի ևս ծանր, յանցանք է անկարգութիւն անել անբովանդակելի Աստուածային տաճարում՝ մեզ շրջապատող դաշտերում, անտառներում և բանջարանոցներում։

Անհրաժեշտ է բացատրել, որ ի դուր տեղը ոչնչացնել ամենաշնչին միջատի կամ ամենափոքր որդի կեանքը, տրորել որ և է լուսատուկին աւելի յանցանք է, քան տաճարի լուսամուտների ջարդելը, կամ ժամասացութեան ժամանակ ինքնագլուխ մոմերն ու կանթեղների հանգցնելը։ Կանթեղի մէջ դուք հանգցնում էք ժամակոչի ձեռքով վառուած պատրոյգը, իսկ ի դուր տրորուած միջատի մէջ դուք հանգցնում էք այն կեանքի կրակը, որ վառել է Արարիչը։ Աստուած ստեղծել է աշխարհս, լցրել է նրան անհամար արարածներով, որպէս զի ամեն ինչ բազմանայ, ուրախանայ և փառաբանէ Իրան. իսկ մարդը բռնի կերպով մտնում է Աստուծոյ այդ անբովանդակելի աշխարհը չար սրտով, լոկ դուարձութեան համար քանդում է բոյներ, կտորատում ծառեր, փետփտում ծաղիկներ, թափում է թոյլ՝ յաճախ բոլորովին անպաշտպան արարածների արիւնը։ Մարդը՝ այլանդակում է իւր շուրջը Աստուծոյ արարած աշխարհը և յետոյ վշտանում, գանգատում բաղդից։ Աշխարհիս վրայ որչափ վայրեր կան, որտեղ կեանքը եռացել է. աղմկում էին անտառներն ու ծառաստանները, պարտէզների մէջ ծառերը ճղնակոտոր էին լինում պտուղների ծանրութեան ներքոյ. օդը թնդում էր հաղարաւոր թռչունների երգով։ Իսկ հիմա հարիւրաւոր վերստ տեղ մեռելային անապատ է, աւաղ. ոչ ծառ կայ, ոչ արտ. ոչ թռչուն և ոչ որդ։ Մարդը ամեն ինչ մերկացրել է. մարդկային չարասրտութիւնը պարտէզը փոխարկում է անապատի։


Թող ամեն շունչ գովաբանէ Աստուծուն։ Աստուծոյ ամեն մի արարած իւր լեզուով փառաբանէ Արարչին։ Պէտք է մարդկանց մէջ զարթեցնել սէր դէպի Աստուծոյ ամբողջ աշխարհը. զգուշաւոր յարգանք դէպի ամեն մի մեզ շրջապատող առարկայ։ Եթէ մեզ թոյլ տային մտնել թագաւորական պալատ և իրաւունք ազատ շրջել բոլոր սենեակներում, չէ որ խիստ զգուշութեամբ կվերաբերուէինք դէպի ամեն մի շնչին բան։ Իսկ Աստուծոյ պալատում, նրա ձեռքով ստեղծուած աշխարհում մենք կա-

տարում ենք ամենատեսակ անկարգութիւն, ի դուր կտրա-
տում ենք անտառներ, ոչնչացնում գետերում ձկներ, ի
չիք ենք դարձնում անողորմաբար ամեն մի կենդանու-
թիւն. քանդում բոյներ, տանջում կենդանիներ: Ման-
կութիւնից երեխան սովորում է քանդել, կոտրել, տանջել
թոյլ և անպաշտպան արարածներին: Տարիների ընթաց-
քում նա աւելի կոշտանում է և յետոյ ամենեւին դար-
մանալի էլ չէ, եթէ մեծանալով դառնայ չարագործ, կե-
ղեքիչ, մարդկանց արիւն խմող: Դաշտում աշնանը հասնում
է այն, ինչ որ ցանուած է եղել գարնանը: Նոյնը լինում
է և մարդկանց մէջ: Մանկութիւնից կարելի է դառել
նրանց ապագայ կեանքի մասին:

Պէտք է մանուկներին ամենափոքր հասակից սովո-
րեցնել սիրով, զգուշութեամբ վերաբերուել Աստուծոյ
ամեն մի արարածին: Վերջին տարիներս շատ տեղերում
սկսել են կամաց կամաց կազմուել մանկական ընկերակ-
ցութիւններ, եղբայրութիւններ Աստուծոյ ամենամեծ տա-
ճարում կարգ պահպանելու, պաշտպանութիւն ցոյց տալու
համար, Բարի և խելացի մարդիկ, ըստ մեծի մասին
քահանաներ, ուսուցիչներ, վարժուհիներ հաւաքում են
գիւղի կամ քաղաքի մանուկներին, սրտանց խօսում են
նրանց հետ, բացատրում սիրոյ անհրաժեշտութիւնը դէպի
ամենավերջին միջատը և մանուկները սիրով արձագանք
են տալիս բարի մարդկանց անկեղծ զրոյցներին: Փոքրիկ-
ները իրանց մէջ միութիւն են կազմում, որ իրանք երբէք
չպէտք է քանդեն բոյներ, ցանցով թռչուններ բռնեն,
թէ դաշտում և թէ անտառում ոչ մի կենդանի էակի
տանջանք չպատճառեն: Այդպիսի ընկերակցութիւնները
երբէք դատարկ բան, զուարճութեան առարկայ չպէտք է
համարել, ինչպէս թւում է առաջի անգամից: Ամեն բանի
մէջ կարգ կայ: Առանց այր ու բէնի չես կարող վարժ
կարդալ ու գրել: Սէրն էլ ունի իւր այր ու բէնը՝ իւր
քերականը: Մանուկները ապրում են սրտով: Տուէք նրանց
սրտին բարի սնունդ: Մանկութեան ժամանակ նրանք
մարդկանց շատ քիչ են ճանաչում, մարդկանց հետ քիչ

գործ են ունենում, նրանք մեծ մասամբ ապրում են բնութեան մէջ. նրանց զբաղեցնում են առուակները, դաշտերն ու անտառները. Ուսուցէք նրանց խելացի կերպով սիրել Աստուծոյ ամբողջ աշխարհը, սիրել խայտաբղէտ թիթեռներին, և՛ գեղեցիկ թռչնիկին և՛ այլանդակ որդին: Տարիների ընթացքում նրանք կսովորեն սիրել և շրջապատող մարդկանց: Եթէ երեխան դաստիարակուի այնպէս, որ նրա համար ճանճին իսկ վիրաւորելը խղճալի լինի, այն ժամանակ միթէ նա կկարողանայ երբ և իցէ ցաւեցնել իւր մերձակորին, իւր եղբորը, իւր նման մարդուն:

Միշտ յիշեցէք, որ Աստուած ստեղծել է մեծ հրաշալի տաճարը, իսկ նրա միջի աստուածապաշտութեան ջերմեռանդութիւնը կախուած է մարդկանցից:



ԱՆՊՏՈՒՂ ԹՁԵՆԻՆ

(Բարութեան սերմերից).

Երուսաղէմում՝ դպիրների և փարիսեցիների քաղաքում, Յիսուս իրան անվտանգ չէր զգում: Յերեկը ժողովրդի մէջ, որ ջերմեռանդութեամբ լսում էր Փրկչի խօսքերը, անկասկած ոչ մի յանդուգն ձեռք չէր կարող բարձրանալ նրա վրայ, Որը բժշկում էր հիւանդներին և մխիթարում վշտացեալներին. բայց գիշերը՝ խաւարի մեռելային խաղաղութեան ժամանակ, ծերակուտի անդամների չարութիւնը ամենայն հեշտութեամբ կարող էր Յիսուսի ազատութիւնը և կեանքը վտանգի ենթարկել: Այդ իսկ պատճառով Փրկիչը Երուսաղէմում լինելիս գիշերները սովորաբար հեռանում էր Բեթանիա, Ղազարոսի տունը: Այստեղ անձնուէր բարեկամների մէջ նա կարող էր միամիտ և անվտանգ հանգիստ առնել ցերեկուայ աշխատանքներից յետոյ: Այդպէս եղաւ նաև Երուսաղէմի հանդիսաւոր մուտքից յետոյ՝ չարչարանքներից առաջ: